

2988

125



616.9

tu-84

616.9

Խ-84

125

ԽՈՐՀՈՒՐԳՆԵՐ

ԱՆՁՆԱԿԱՆ ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ
ՀԱՄԱՐ ԽՕԼԵՐԱՅԻ ԴԵՄ

Խօլերայով հիւանդանալուց պահպանելու համար:

Խօլերայով չհիւանդանալու և իւր անհոգութիւնով այդ հիւանդութեան տարածուելու պատճառ չդառնալու համար անպատճառ հարկաւոր է կանոնաւոր կեանք վարել և այն նախազգուշացուցիչ միջոցները ձեռք առնել, որ ցոյց են տալիս խոհանութիւնը և փորձը:

Վտանգից վախենալով չը պէտքէ խիստ կերպով փոխել սովորական կեանքի եղանակը, միայն անպատճառ հարկաւոր է խոհանութիւնով օգուտ քաղել այս խրատներից և բժշկի խորհուրդներից — և դրանց օգնութիւնով հեռացնել իւր կեանքի և ապրուստի եղանակից այն ամենը, որ սովորաբար հիւանդանալու պատճառ է դառնում:

1) Բնակարանները և ամբողջ տան կահկարասիքը, — այսինքն՝ — պնէրը, բազերը, ախոռները, սրահները, ներքնատները, պաղամեն տեսակ գործատները, մանաւանդ արտաքնոցները, ջրերի փոսերը, աղբանոցները, և այլն, պահպանել վե՛րիճանի մաքուր և խտակ:

Հանջուած մաքրութիւնը կլինի այն ժամանակ, երբ ամեն յոտոտութիւնները հեռացնուին, իսկ խօլերայի ժամանակ նզամ անհրաժեշտ է առաջուց նրանց ժանտահալած սվնաս դարձնել) լուանալով տաք ջրով, մոխրաջրով, լուծած կարբոլի թթուաւորով, օգափոխութիւնով և այլն:

15302-58

32111-4.6

2002

Տաք և պարզ օրերին պէտքէ բանալ պատուհանները և դռները, թէ օդափոխութեան և թէ բնակարանները չորացնելու համար, իսկ խոնաւ և վատ եղանակին վառել վառարանները, չը ծածկելով ծխնելոյզը: Չը պէտքէ գործածել զանազան անուշահոտ ծխելու փողիներ, մոմեր և թղթեր. օդը մաքրելու համար, դրանք անօգուտ միջոցներ են: Չը պահել սենեակներում աղտոտութիւններ, ջրւոտքի ամաններ, լուսացքի ջուր, աղբ, թոզ, կեղտոտ շոր և այլն:

Ծանօթութիւն: Որովհետեւ մաքրութիւն և վայելչութիւն պահպանելը աւելի շատ պարտաւորեցուցիչ է և այն մարդկանց համար, որոնք պահում են զանազան գործարաններ, պատրաստելու, պահպանելու և ծախելու ապրուստի առաջին հարկաւորութեան նիւթերը, ինչպէս օրինակ. — սպանդանոցները (ղասաբխանայ) ձկնապանների, բաղախների, երշիկ պատրաստողների (կալբաս) հացթուխների խանութները, փռները, սրճանոցները, պանդոկները, (քարվանսարանները) հեղանոցները և այլն. այդ պատճառաւ էլ այդ նիւթերի գործածողները, իւրեանց անձնական ապահովութեան համար պարտաւոր են լիակատար օգնութիւն հասցնել այս նպատակով կազմուած առողջապահ — պօլիցիական վերատեսչութեանը, յայտնելով այդ վերատեսչութեանը ամեն մի դէպք, երբ վերոյիշեալ անձինք բռնակալան պօլիցիական հրամանները կատարելուց կշեղուին:

2) Հոգալ շորերի և սպիտակեղէնների մաքրութեան մասին գործածելով նա մանաւանդ այնպիսիները, որոնք հեշտեն մաքրվում և ժանտահալած (անլինտո) լինում. հոգալ նոյնպէս շապիկների, վարտիկների և անկողնու սպիտակեղէնների մասին, որոյ համար շուտ շուտ փոխել, թէ մէկը, թէ քիչսիւ, իսկ եթէ այդ անհար է, ժանտահալած անել ամեն օր:

3) Հոգալ մարմնի մաքրութեան և իստակութեան մասին. շարունակել սովորութեան համաձայն լողալ տանը կամ բաղնիքում, զգուշանալով մրսելուց և ուշադրութիւն դարձնելով վանանների և բաղանիքների մաքուր պահպանելու վրայ: Ծովում, գետում և այլն լողանալը կարող են շարունակել սովոր մարդիկ նաև խօլերայի ժամանակ, պահպանելով հարկաւոր նախազգուշութիւնները, ինչպէս օրինակ — չը լողանալ ցուրտ եղանակին, առաւօտը շատ վաղ, կամ երեկոյեան ուշ, չմտնել ջուրը անօթի կամ կուշտ փորով, իսկոյն ճաշելուց յետոյ և այլն:

4) Հոգալ խմելու ջրի մաքրութեան մասին, չ'աղտոտել և չը թոյլ տալ աղտոտելու աղբիւրները և ջրհորները. չը գործածել անմաքուր կասկածելի ջուր, իսկ խօլերայի ժամանակ ամենեւին չգործածել հում ջուր, այլ նրա փոխարէն խմել միշտ եռացրած կամ սրանից նոր պատրաստած ուրիշ թարմ-խմելիքներ զգուշ մնալով ծախու կվասից, լիմոնադից և ուրիշ խմիչքներից: Չը պէտքէ միանգամից շատ խմել, մանաւանդ մարմնի տաքացած և յոգնած ժամանակ. աւելի լաւ է ծարաւը յագեցնել տաք թէյով: Օղիի, գինու, (բայց ոչ նոր գինու, մտճարի) լաւ գարեջրի, կվասի և այլ խմիչքների չափաւոր գործածութիւնը չի արգելվում սովոր մարդոց:

5) Հոգալ ուտելեղէնների մաքրութեան և թարմութեան, կերակրի բաւարարութեան և դիւրաւ մարսութեան մասին: Ամեն մէկին փորձից քիչ թէ շատ յայտնի է. թէ ո՞ր տեսակ կերակուրը նորա համար աւելի հեշտ մարսական է և անվնաս (թեթեւ). այս պատճառաւ կերակրի ընտրութեան ժամանակ պէտք է աչքի առաջ ունենալ անձնական փորձը: Կանաչեղէնի և պտուղների չափաւոր գործածութիւնը թոյլ է տրվում սովոր մարդոց նաև խօլերայի ժամանակ, եթէ չգործածել անօթի փորով, ունենալ առողջ ստամոքս, առաւել ևս եթէ դրանք եփած լինեն: Վտանգաւոր է և այդ պատճառաւ աններելի է լիշեալ նիւթերի չափից դուրս գործածելը. մանաւանդ հում, խակ, կամ շատ հասած, ևս առաւել փչացած և փթած: Պէտքէ հեռու կենալ կերակրի չափազանցութիւնից և մանաւանդ խմիչքների շատ գործածելուց: Չը դուրս գալ տնից անօթի փորով, երկար ժամանակ սոված չմնալ. չը գործածել լիզալի, հում և սառը կերակուրներ (բօտփին, օկրօշկա, վենեգրետ և այլն) սունկեր, սալաթ, բոդկ և ուրիշ հում պտուղներ և ընտեղէններ առանց լուալու եռացրած ջրի մէջ. պէտքէ նոյնպէս չափաւորել ծարաւացնող կերակուրների գործածութիւնը, — օրինակ կալբասի, խոզի մսի, աղի ձկան, պանիրի, սոխի, սխտորի և նոյնպէս վատ թխած և տաք հացի: Կաթը կարելի է աներկիւզ գործածել, միայն, բոլորովին թարմ, անխառն և անպատճառ եփած. իսկ մածոնից և հում սերից (ղայմաղից) պէտքէ բոլորովին զգուշ կենալ:

Այս նիւթերի գործածելը մանաւանդ վտանգաւոր է պտուղների հետ միասին, կամ պտուղ աւտելուց յետոյ: Օրինակ սառը կաթից յետոյ շատ վտանգաւոր է վարունգ կամ իւզալի կերա-

կուր ուտելը: Այստեղ անհրաժեշտ է յիշել, որ կերակրի և խմելի չափազանց զգուշութիւնը, որ շատ անգամ գործ է դրվում երկիւղի ազդեցութեան տակ և որը խիստ փոփոխութիւն է մոցնում կեանքի մէջ՝ առաւել վնասակար է, քան թէ օգտակար:

Մատաղահասները, ծերերը և մանաւանդ թոյլ մարսողութիւն ունեցողները պէտքէ առանձնապէս դգոյշ լինին կերակուր ընտրելիս:

Ծանօթ. Ձը պէտքէ առհասարակ ուտել և խմել այն տներում, ուր եղել են և կան խօլերայով հիւանդներ կամ մեռածներ: Ուտելուց առաջ հարկաւոր է ամանները լուալ մաքուր, եռացրած ջրով. նոյնպէս հարկաւոր է հոգացողութեամբ լուալ ձեռքերը և երեսը: Թէ ուտելուց առաջ և թէ նրանից յետոյ լաւ է ողողել բերանը նոյնպէս եռացրած և քիչ աղի թթուատ (СОЛЯНАЯ КИСЛОТА) աւելացրած ջրով, այնպէս որ մի բաժակ ջրի հետ խառն լինի 10—12 կաթիլ վերոյիշեալ թթուատից:

6) Պէտքէ պահպանել մրսելուց, մաքուր, թարմ օդ ծծել, բայց երբէք չը պառկել խոնաւ գետնի վրայ և չը քնել բաց գետնի վրայ. չը զբօսնել խոնաւ տեղերում և առհասարակ չը մանգալ ուշ գիշերով. հագնուիլ եղանակի համեմատ, մանաւանդ ոտքերը՝ և ստամոքսը առաւել տաք պահել:

Փորձը ցոյց է տալիս, որ ստամոքսի տաք պահելը, ֆլանելի կամ մահուդի փորացու կապելը շատ օգտակար է:

Ձը պէտքէ թոյլ տալ իրան գիշերային կերութիւններ քէփեր և զանազան տեսակ անկարգութիւններ ու արբեցողութիւն անել. չը մաշել իրան չափազանց շատ ֆիզիքական և մտաւոր աշխատանքներով, որովհետեւ թուլացած կազմուածքը առհասարակ աւելի հեշտութիւնով է հիւանդութիւնն ընդունում:

8) Ամենեւին չը պէտքէ գործածել զանազան ծածուկ, մասնաւոր մարդկանց սեփականութիւն կազմող ու նրանց գոյած նախազգուշացուցիչ միջոցները և զօրեղներգործող դեղեր խօլերայի դէմ. մանաւանդ լուծողական աղեր, լուծելու և փսխելու համար, առանց բժշկի խորհուրդի:

9) Իւրաքանչիւր տանտէր, կառավարիչ, կենող, արհեստանոցի կամ գործարանի տէր (մանաւանդ այնպիսիների, ուր աշխատում են անչափահասներ) ապաստարանների վարչութիւն, և այլն, էլ աւելի պէտքէ հետեւեն իրենց տեսչութեանը, հոգացո-

ղութեանը և պատասխանատուութեանը յանձնուած մանուկների առողջութեանը. ամեն անգամ երբ նրանք հիւանդանան լուծողութեամբ, անբացատրելի սաստիկ ծարաւով, խկոյն պէտքէ դիմել բժշկին, չը դիմելով ոչ մի ծածուկ միջոցների: Ձեռք բերել ամենին մատչելի, վնասը հեռացնող ժանտահալածող նիւթեր և գործադրել նրանց հիւանդի փսխած կամ ներքւով թափած կեղտոտութիւններից աղտոտուած առարկաները և կամ առհասարակ հիւանդների ձեռքի տակ եղած առարկաները անվնաս, անվարակ դարձնելու համար:

10) Խօլերայով հիւանդանալու դէպքեր երբ լինում են չը պէտքէ թողնել առանց մի առանձին և հարկաւոր պատճառի իր բնակարանը, տունը. որովհետեւ երկիւղը և շտապով ու անգարկութիւնով տեղափոխուելուց առաջ եկած անփախչելի հետեւանքները, ինչպէս կերակրի, բնակարանի, հանգստութեան և բժշկական օգնութեան ամեն տեսակ զրկողութիւնը, — աւելացնում են հիւանդանալու վտանգը ճանապարհին, կամ նոր տեղը հասնելուն պէս: Բացի սորանից անհրաժեշտ է յիշել, որ ճանապարհին կամ տեղ հասնելիս հիւանդացողները իրանք կարող են հիւանդութեան տարածուելու պատճառ դառնալ. բայց էլի այն անձինք, որոնք տեղափոխվում են ապահով տեղեր անձնական և հասարակաց ապահովութեան համար, պէտք է անպատճառ յայտնեն առողջապահ-պօլիցիական տեսչութեանը հիւանդութիւնով վարակուած տեղից իրենց գալու մասին:

11) Որովհետեւ աղքատ մարդիկ, որոնք կարօտ են լաւ բնակարանի, սնունդի և հագուստի և առհասարակ կեանքի վատ պայմաններում են գտնվում, — առաւել ենթարկուած են խօլերայով վարակուելու վտանգին, և տարածելու հիւանդութիւնը նոյն ազգաբնակչութեան միւս դասակարգերում, — այդ պատճառաւ էլ պէտքէ յուսալ, որ հասարակութեան առաւել հարուստ ունեւոր դասը նոյն իսկ իր անձնական ապահովութիւնը աջքի առաջ ունենալով և մարդասիրական զգացմունքից դրդուած օգնութիւն կը հասնի չունեւորներին, աղքատներին:

Այս օգնութեան ամենալաւ կերպը այն կլինի որ խօլերայի ժամանակ ձրի ճաշարաններ սահմանեն, ամենայն օր բաժանելու առատ և թարմ կերակուր, կազմակերպեն գիշերօթիկ ապաստարաններ, ձրի տոմսակներ տալով այս ապաստարաններից օգտուելու համար, տալով հագուստ, սպիտակեղէն, վառելիք և պարարտե-

լով 14 յօդ. իշատակուած ժանտահալածող բժշկական միջոցներ՝ բաժանելու ուժ հարկն է: Անվարձ ճաշարանները և գիշերօթիկ ապաստարանները պէտքէ անպատճառ շինուած լինին այնպէս, որ իրենք չը ծառայէին իբրև հիւանդութեան աղբիւր, այսինքն նրանք պէտքէ լինին արձակ և մաքուր, իսկ նրանց մօտ գտնվող արտաքինոցները պէտքէ շարունակ մաքրուին և անվնաս դարձնուին (ժանտահալած անել):

12. Ամեն անգամ հէնց որ պատահի մարսողութեան խանգարուիլ, մանաւանդ լուծողութիւն կամ անբացատրելի սաստիկ ծարաւ իսկոյն դիմել բժշկին, որովհետեւ խօլերայից հիւանդանալու ենթարկուած մարդկանց մեծամասնութիւնը տանջվում է միայն լուծողութեամբ, որից յետոյ հիւանդը առաւել ծանր դրութիւնների (припадку) մէջ կարող է ընկնել, եթէ այդպիսի լուծողութիւնը անուշադիր և առանց բժշկելու թողնուի. հիւանդութիւնը նոր ժամանակ առաւել շուտ է բժշկվում, եթէ շուտեն իմաց տալիս բժշկին:

13) Մինչև բժշկի գալը հիւանդացածը պէտք է պառկի անկողնում, միւսնոյն ժամանակ, յարմարութեան համար հարկաւոր է տակը փռել որևէ չը ծծող գործուածք (կլէօնկա, ձիւթաներկ կամ իւղաներկ թուղթ և այլն), որը կարող է մաքրուիլ և ծառայել ուրիշ առարկաներ հիւանդի կղկղանքներով աղտոտելուց պահպանելուն. ծայրահեղ դիպուածում կարելի է հիւանդի տակը ձգել յարդ, դարման, որը պէտքէ շուտ շուտ փոփոխել, իսկ արդէն ապականուածը այրել: Հիւանդի սենեակից հեռացնել բոլոր աւելորդ առարկաները, չը ներս թողնել, առանց մի կարևորութեան կողմնակի անձանց, առատօրէն մաքրել սենեակը, օդը, հիւանդի կղկղանքով ապականուած առարկաները, սպիտակեղէնը, յատակը գորգերը, կահ-կարասիքը (մէքէլը) առանց յետաձգելու մաքրել ցոյց տուած համապատասխան եղանակներով և միջոցներով, օրինակ՝ լունալով տաք ջրով, մոխրաջրով, ժանտահալած դեղերով, եռացած ջրում պահելով քիչ շատ երկար ժամանակ, նայելով աղտոտութեան աստիճանին: Հիւանդի բոլոր արտաթորութիւնքը առանց մի բոպէ ուշացնելու պէտքէ անվնաս դարձնել ժանտահալած անող դեղերով:

Հիւանդին շրջապատողները նոյնպէս պէտքէ հոգան կարելուոյն չափ մաքրութիւն պահպանելու մասին, ինպէս օրինակ՝ շուտ շուտ պէտքէ լուանան իրենց ձեռքերը հիւանդութիւնը

ոչնչացնող դեղերով. պէտքէ ունենալ հագին այնպիսի շորեր, որոնց հեշտ է մաքրել և անվնաս դարձնել:

Այն իրերը, որոնք չնչին արժէք ունեն և ապականված են արտաթորութիւններով, ամենից լաւն է առանց յետաձգելու այրել: Այն բնակարանները, որոնց մէջ հիւանդներ էին գտնվում խօլերայի ժամանակ, պէտքէ գոնէ մի 12—14 օր ազատ մնան, և ժանտահալած միջոցների ենթարկուեն:

Չը պէտք է առնել և առհասարակ ձեռք բերել բանեցրած շոր, սպիտակեղէն, կարասիք, մահճակալներ, դիւաններ, դօշակներ և այլն. եթէ որ այդ տեսակ առարկաները նախօրօք մաքրուած չէին և լաւ անվնաս դարձրած ժանտահալած դեղերով.

14) Խօլերայի հիւանդութեան առաջուան փորձերից յայտնի են հետեւեալ ընդհանուրին մատչելի եղանակները, որոնցով կարելի է հեշտացնել խօլերայով հիւանդի տանջանքները և առհասարակ հիւանդին օգնելը, մինչև բժշկի գալը:

Ա. Լուծողութեան ժամանակ՝ դնել փորի վերայ տաք կօմպրեսներ, չոր, տաքացնող պրիպարկաներ դարուց, մոխրից, մանանեխից (գարչիցից). խմեցնել հիւանդին բրնձի ջուր, տաք դափա (սուրճ) կօնեակով:

Բ. Սիրտը թափելու, փխսելու ժամանակ՝ կուլ տալ սառուցի կտորներ:

Գ. Ծարաւը կտրելու համար՝ գործածել սառուց, գինի, սառը ջուր, միայն անպատճառ եֆ տուած. թէ գինին, թէ ջուրը պէտք է քիչ քիչ խմել մի մի կլտում և ոչ թէ միանգամից:

Դ. Հիւանդի մարմնի ցնցումների ժամանակ՝ պէտք է շփել մարմինը որ և է բրդի կտորով կամ քափուրի, կամ գարչիցի մանանեխի սպիրտով, թուուցիկ լիւղով (մազ), սառուցով. տաքացնել մարմինը տաք ջրով լիքը շիշերով, տաք վաննաներով:

Ե. Հիւանդի ոյժերը պահպանելու, կազդուրելու համար՝ պէտք է տալ նրան գինի, (խերէս, պօրովէն, բօմ, օդի, շամպանեայ), նոյնպէս Վալերիանովի ու Հոֆմանի դեղի կաթիլներ:

Պարտաւորեցուցիչ առողջապահական կարգադրու- թիւններ ազգաբնակութեան համար *)

Հաստատված է Կովկասի կառավարչապետի կողմից 6 Յունիսի
1890 թ.

1) Կովկասեան երկրի սահմաններում տարափոխիկ խօլերայի մուտք գործելու վտանգի հնաւորութիւնը պարտաւորեցնում է իւրաքանչիւր մարդու ամեն կերպ աջակցել, ինչպէս վարչական տեսչութեան տստիճանաւորներին, նոյնպէս և այն բոլոր ան-
ձանց, որոնց վրա պարտաւորութիւն է դրուած ոչնչացնելու ժանտախտի ներս մտնելուն, նոյնպէս և նորա զարգանալուն նպաստող պայմանները:

2) Սոյն պարտաւորութիւնները կայանում են նրանում, որ անպատճառ ճիշտ պէտք է կատարել եղած օրէնքի բոլոր պա-
հանջմունքները որոնք վերաբերում են ժողովրդական առողջու-
թիւնը պահպանելու միջոցներին, և ներքև յիշած կանոններին, որոնք հրատարակվում են այժմ վերոյիշեալ պահանջները պար-
զելու նպատակով:

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ.

Կանոններ—վարակող հիւանդութիւնը մուտք գործելը և տարածուիլը
արգելելու համար:

1) Օրէնքի բոլոր ցուցմունքները փողոցների, հրապարակ-
ների սալլայատակների, ջրածակերի, մաքուր և կարգին պահպա-
նութեան, գաւիթների, լուացքի հորերի, և արտաքնոցի մաք-
րելու վերաբերեալ—պէտք է կատարուին առանձին խնամքով:

*) Եւս կարգադրութիւնները պարտաւորեցուցիչ են այն քաղաք-
ների և գիւղերի համար, որոնք իրենց համար, նահանգական վարչու-
թիւններից, կամ հասարակական ինքնավարութիւնից հրատարակուած
պարտաւորեցուցիչ կարգադրութիւններ չունին:

2) Անպատճառ պարտաւորեցուցիչ է դառնում բոլոր բնա-
կիւնների համար մաքրել բազերը բոլոր նոցա պատկանելիքով,
նոյնպէս իւրաքանչիւրի տանը կպած փողոցի մասը և այդ մաք-
րելը պէտք է կատարեն տանտէրերը նշանակուած ամենակարճ
միջոցում:

Ծանօթութիւն: Փողոցային և տօնավաճառային հրա-
պարակների մաքրելու և կարգին պահպանելու պարտաւո-
րութիւնը դրվում է քաղաքային գումաների վրայ—այն
քաղաքներում, որոնք քաղաքային ինքնավարութեան իրա-
ւունքներ ունին, իսկ մնացեալ քաղաքներում, քաղաքային
պօլիցիական վարչութեան վրայ, իսկ գիւղերում—գաւա-
ռական և գիւղական իշխանութիւնների վրայ, որոնք այս
կանոնները պիտի կատարեն իսկոյն, առանց ուշացնելու:

3) Չապականել գետի կամ գետակի ջուրը, մանաւանդ, որը
գործեն ածում, խմելու և հերակուր եփելու համար: Խմելու և
կերակուր եփելու համար բանեցնել միայն գետերի այն տեղե-
րից և այն ջրահորներից ու աղբիւրներից, որոնք իրենց ան-
վտանգ լինելովը, պէտքական են և եթէ այդ տեղերից ջուր
վերցնելը վերոյիշեալ պահանջների համար չի արգելուի սահմա-
նուած իշխանութիւնից: Զրհորները չ'կեղտոտել այլ մաքուր
պահել:

4) Սպիտակեղէնը չլուանալ և չողողել ամենեւին գետերի
առուների և աղբիւրների այն տեղերում, որ թոյլ չէ տուած Պօլի-
ցիայից: Իսկ լուացքի ջրերի, ամանների ողողանքը և այլն
պէտք է ածել միմիայն լուացքաջրերի հորերը, որոնց պէտք է
անվնաս դարձնել վերոյիշեալ գեղերով:

5) Հասարակական և մասնաւոր բաղնիքները պէտք է չա-
փազանց խիստ մաքուր պահպանել: Ամենքի լողանալու աւա-
զանի միջի ջուրը պէտք է շուտ շուտ փոխել: Նոյնպէս շուտ
շուտ պէտք է լուանալ յատակը, նայնպէս թախտերը և տախ-
տակները: Սպիտակեղէնը պէտք է լինի բոլորովին մաքուր և
թարմ:

Ծանօթութիւն: Կեղտոտ լուացք լուանալը հասա-
րակաց բաղնիքներում խստիւ արգելվում է, թէ բաղ-
նիք պահողներին, թէ ծառաներին և թէ բաղնիք գնա-
ցողներին:

6) Պէտք է դէն ածել տան և կենդանիների աղբը, ան-

պէտք ցնցոտիքը, և ուրիշ անմաքրութիւնները նոյն պօլիցիական վարչութիւնից նշանակած տեղերը: Իսկ դորանց մէջից՝ օգի մաքրութեանը վնասող առարկանները՝ ալբել:

7) Ձի թույլատրվում անմաքրութիւն առաջացնել փողոցներում, հրապարակներում և ուրիշ չը նշանակած տեղերում, մանաւանդ այն տեղերում, ուր ժամանակաւոր կամ մշտապէս, շատ ժողովուրդ է հաւաքվում. օրինակ, փողոցներում, քարվանսարաններում, մանգալու տեղերում և այլն:

8) Մանր և խոշոր անասունների մորթելը և նրանց կաշու չորացնելը պէտք է կատարել դորա համար նշանակուած առանձին տեղերում, պահպանելով խիստ մաքրութիւն, լուանալով տրիւնը և անմաքրութիւնները և հեռացնելով բոլոր աւելորդ մասերը, ինչպէս են՝ փորոտիքը, պոզերը, սմբակները և այլն, այդ բոլորը պէտք է ածել այնտեղ, որտեղ ցոյց կտայ պօլիցիան:

9) Այն սալակները, որոնցով տարվում է միսը. և մսավաճառների խանութների քօթուկներն ու սեղանները պէտք է մաքուր պահպանուին: Նոյնպէս պէտք է մաքուր պահպանել այն կտաւի ծածկոցները, որոնցով պէտք է ծածկուի միսը սալով տանելիս: Կենդանի կամ աղած ու ծխած ձկան ծախելը թույլ է տրվում փողոցներում, բայց մեռած ձկների և մսի ծախելը պէտք է լինի անպատճառ խանութներում:

10) Արգելվում է փչացած մսի, փթած և խակ պտուղների, փթած ընդեղէնների և ամեն տեսակ փչացած ուրեմն և վտանգաւոր մթերքների, խմիչքների առուտուրը: Վաճառողները պարտաւորեն մաքրութիւն պահպանել, ինչպէս իւրեանց արևտրական տներում, այնպէս էլ նոցա չորս կողմը, իրենց հագուստները, ամանեղէնը և ապրանքների ուրիշ տեղերը նոյն իսկ ապրանքը, պահպանելով վերջինս փչանալուց և ապականելուց, հարկաւոր ծածկոցներով և խուփերով:

Ծանօթութիւն: Այս կանոնները մանաւանդ խիստ պէտք է պահպանուին քարվանսարաններում, պանդոկներում, հիւանդոցներում, չայատներում, տրակտիրներում, դուքաններում և այլն:

11) Այն անձանց, որոնք հին շորերի և ուրիշ բանեցրած առարկաների առուտուր են անում, խիստ արգելվում է գնել այդ առարկաները, այնպիսի տներէց, ուր կային և կան հիւանդ-

ներ, մանաւանդ, որոնք տանջվում են լուծողութեամբ և փխելով, արգելվում է նոյնպէս այս առարկանները ծախիլ նախ քան նրանց անվարակ դարձնելը: Նոյնպէս և արգելվում է սղգականներին և ուրիշ անձանց, որոնց խնամքին յանձնուած էր հիւանդը, ծախել կամ ընծայել անվնաս դարձնելուց առաջ այն առարկանները, ամանները կամ կարասիքը, որոնք մօտ էին հիւանդին:

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

Կարգադրութիւններ՝ խօլերան երևալու դիպուածում:

12) Բացի նախորդ բաժնում յիշուած կարգադրութիւնների ամենախիստ կերպով կատարելը, բնակիչները, խօլերայի յայտնուելուն պէս, պարտաւորում են իրենց բնակած տեղում, իրենց յայտնի իւրաքանչիւր խօլերային դէպքի մասին, կամ այնպիսի հիւանդութեան մասին, որ յիշեցնում է խօլերան, օրինակ—լուծողութեան և փսխելու—տեղեկացնել բժշկին, կամ պօլիցիային կամ այն թաղի թաղական առողջապահ—հոգաբարձուին, որի թաղում հիւանդացածը գտնվում է, կամ թէ չէ տեղեկացնել առանձին, խօլերային հիւանդանոցի համար յատկացրած շինութեան, կամ հանգստութեան ապաստարանի վարչութեան. որպէս զի բժշկական վարչութիւնը և պօլիցեան կարևոր միջոցները ձեռնարկէին օգնութիւն հասցնելու հիւանդացածին և միւս բնակիչներին ազատ պահելու վարակուելուց:

13) Իսկ հիւանդին շրջապատող անձինք, հէնց նորա հիւանդութեան առաջին նշույններին նայելով, պէտք է յայտնեն հիւանդի մասին բժշկին, թաղական հոգաբարձուին, կամ պօլիցիական վարչութեանը, յայտնելով հիւանդի հասցէն, բացատրելով միևնոյն ժամանակ հիւանդութեան նշանները, որպէս զի բժշկը կարողանար ժամանակին օգնութիւն հասցնել հիւանդին, եթէ որ հարկաւոր է, կարևոր բժշկական և ուրիշ միջոցներով, որոնք տրվում են հիւանդներին կամ վարձով, որոշուած գնով,—կամ թէ ձրի, աղքատ դասակարգի անձանց համար:

14) Թաղային առողջապահութեան հոգաբարձուները իրաւունք ունին ազատ մօտել նոցա յանձնուած թաղի բոլոր բնակեցրած տները, օրուալ ամեն ժամանակ, իսկ տան բնակիչները ա-

մենեին սորան արգելք չը պետք է լինին, ինչպէս նա և թաղական բժշկին և պարտաւոր են մանրամասն լիակատար բացատրութիւններ տալ այս ամեն անձանց առաջարկած հարցերին, որոնք վերաբերում են տան պահպանութեան և նորա մէջ երևացող հիւանդութիւններին:

15) Ինքը հիւանդացողը, եթէ նա հասակաւոր է, պետք է հեռացնէ իրան ամեն տեսակ յարաբերութիւն ունենալուց առողջ մարդոց հետ, բացի այն անձինքներից, որոնք խնամք են տանում նորան կամ բժշկում: Այդպիսի հիւանդի օգգականները, որոնք անմիջապէս գործ չունին նորա հետ, պարտաւորվում են նոյնպէս հեռու մնալ հիւանդացածի հետ գործ ունենալուց:

16) Թաղական բժշկի կամ առողջապահական հոգաբարձուի, և նոյնպէս հիւանդին խնամելու համար նշանակուած ֆէլդշերների և ուրիշ անձանց իւրաքանչիւր օրինաւոր պահանջը պետք է կատարեն, առանց այլ և այլութեան, այն ամեն անձինքները, որոնց վերաբերում է այդ:

17) Խօլերայով կամ դորա նման հիւանդութիւնով տանջուող հիւանդների փխսանքից և լուծողութիւնից առաջացած աղբը նոյնպէս և առհասարակ բոլոր առարկաները և իրերը, որոնք կպել են հիւանդին կամ մեռնողին, մանաւանդ ապականուած այգպիսի հիւանդի արտաթորութիւնով, ինչպէս են՝ շորերը, սպիտակեղէնը, կարասիքը, ամանեղէնը, և այլն, անպատճառ պետք է անվնաս դարձնուին համաձայն բժշկի, առողջապահ հոգաբարձուի, կամ ֆէլդշերի, կամ ուրիշ դորա համար նշանակուած անձանց ցուցմունքներին:

18) Խօլերայով կամ դորա նման հիւանդութեամբ տկարացած հիւանդի արտաթորութիւնները (փխսանքը և կղկղանքը) այլ կերպ չը պետք է արտաքնոց ածուին, մինչև հիմնաւորապէս անվնաս անվարակելի չդառնան:

19) Արտաքնոցները պետք է մեծ ջանքով մաքրուին, իսկ կղկղանքը անվարակելի դառնան ներքև ցոյց տուած եղանակով:

20) Արգելվում է կղկղանքը ածել բազը, փողոցը և այլն, այլ անպատճառ ածել արտաքնոցները կամ ուրիշ հորեր, միևնոյն ժամանակ այդ կղկղանքները առաջուց պետք է անվնաս անվարակելի դարձնուին:

21) Այն տներում, ուր գտնվում են կամ գտնվում էին խօլերայից և կամ դորա նման հիւանդութիւնից մեռածներ, կող-

մնակի անձինք, մինչև այդ տների անվտանգ դառնալը, ներս չը պետք է թողնուին:

22) Մեռածի մարմինը լուանալուց յետոյ անվարակելի դեղերով և դազաղը դնելուց յետոյ, հողին է յանձնվում, իսկական մահուան պարտուպատշաճ վկայութեամբ հէնց նոյն օրը, եթէ կարելի է:

23) Չը պետք է այգպիսի մեռելներին բաց դազաղներով տանել, այլ պետք է ամուր ծածկել դազաղի խուփը, մեխելով: Չը պետք է թող տալ մեռելների թաղման ժամանակ այն անձինքներին, որոնք ուղղակի նշանակուած չեն դորա համար: Դազաղը մինչև գերեզման տանելը թող է տրվում միայն այն տեղերում, ուր չը կան դորա համար կառքով տանելու միջոցներ:

24) Արտաթորութիւնների, (փխսած և ներքևով թափած) սպիտակեղէնի, արտաքնոցների և այլն անվնաս անվարակ դարձնելու համար կարելի է գործ դնել.— Սուլէմայի ջրախառնուրդ (1 մասին 1000 մաս ջուր, աւելացնելով 1 մաս հասարակ աղ կամ նաշատիր կամ 5 մաս աղաթթուատ (СОЛЯНАЯ КИСЛОТА), Կարբօլեան թթուատի ջրախառնուրդ (3 կամ 4 մաս 100 մաս ջրի հետ). ծծմբալղնձի կամ ծծմբերկաթի ջրախառնուրդ (առաջինից 1—3 մաս, երկրորդից 10 մաս 100 մաս անմաքրութիւնների դէմ):

Լճա կարճարօտ հրահանգներ վնասը հալածելու և այդ նպատակով գործ դնելիք միջոցների մասին.

I. Բնակարանների, կահ կարասիքի, շորերի ու սպիտակեղէնի անվնաս դարձնելը (դէզինֆեկցիա): ()ր առաջ, հիւանդութեան սկզբում պետք է հեռացնել հիւանդի սենեակից աւելորդ կահ կարասիքը, առարկաները և այլն. յետոյ հիւանդութեան վերջը բոլոր էփանագին նիւթերը ինչպէս փալասներ, կեղտոտութիւնը և այլն այրել: Լճալղնի պատկանելիք առարկաները, սպիտակեղէնը, շորերը երթարկել անվնաս դարձնելու՝ շոգիով, դիզէնֆէկցիօնի սենեակում: Իսկ եթէ այգպիսի սենեակ չլինի, այն ժամանակ պետք է այրել այն դօշակները, որոնց վրայ պառակած են եղել հիւանդները և մանաւանդ որոնք աղտոտուած են հիւանդի արտաթորութիւններով: Իսկ սպիտակեղէնը եփ տալ եռեկած մոխրաջրի մէջ և յետոյ մաքուր ջրով ողողել: Սեղանները ուրիշ կահ կարասիքները նոյնպէս դռներն ու պատուհանները լուացվում են, իսկ սենեակների պատերը, առաստաղները և յատակները առատ սրսկվում են կարբօլեան թթուատի ջրախառնուրդով, (4 մաս 100 մաս ջրի

հետ) կամ թէ բժշկի ցոյց տալուց յետոյ սուլէմայի ջրահանուորդով (1 մաս 1000 մաս ջրի հետ), այս ամենը կատարվում է մեծ սրսկիչի (պուլվերիզատոր), կամ ծակառի, կամ ձեռի նասոսի միջոցով, կամ թէ վրձինով (չէտկա) քսելով: Սետաղի առարկաները լուացվում են թուղեռացող մոխրաջրով և յետոյ սրբվում են: Փսխելուց կամ կղկղանքից առաջացած բիծերը մեծ խնամքով լուացվում են կարթուրեան կամ սուլէմայի ջրահանուորդով:

II. Կղկղանքի անվնաս—անվարակ դարձները կատարվում է եթէ նրան համահասար չափով խառնեն.— 1) ծծմբային կամ աղի թթուատի ջրահանուորդի հետ (1 մաս 2 մաս ջրի հետ) և այդ խառնուրդը թողնեն 6—12 ժամ: 2) Չմաքրած կարթուրեան թթուատի ջրահանուորդի (5 մաս 100 ջրի հետ) կամ սուլէմայի (2 մաս 1000 մաս ջրի հետ, աւելացնելով 1 մաս աղային թթուատի), թողնելով 2—24 ժամ, (Սուլէմայի գործածութիւնը, աչքի առաջ ունենալով նրա չափազանց թունաւոր յատկութիւնը, կարելի է կատարել միայն բժշկի հսկողութեան ներքոյ): 3) Ծծմբապղնձի, (1 մաս 100 մաս ջրի հետ), ծծմբերկաթի (10 մաս 100 մաս ջրի հետ) ջրահանուորդով 24 ժամուան ընթացքում: 4) Կրաջրով (20 մաս թուղեռացող կիր խառնում են 100 մաս ջրի մէջ և պահում են բերանն ամուր փակած ամանների մէջ), որի 2¹/₂ մասը ածվում է 1 մաս կղկղանքի վրայ և այդ խառնուրդը թողնվում է 24 ժամ:

III. Լրտաքնոցների, լուացաջրի, կեղտաջրի անվնաս անվարակ դարձները:

() Բ առաջ, մինչև վարակման երևալը պէտք է դուրս տանել ամեն տեսակ կեղտոտութիւնները բնակարաններից շատ հեռու տեղեր խառնելով ծծմբային թթուատի կամ կարթուրեան չմաքրած թթուատի ջրահանուորդի հետ այն աստիճան, որ կեղտոտութիւնների հոտը ոչնչանայ, խառնելով ծծմբապղնձի հետ (3—4 մաս ծծմբապղնձի 100 մաս փոսերի միջի կեղտի հետ ու 1 մաս 1000 մաս կեղտաջրի հետ):

IV. () Գ ի իստակութեան համար անընդհատ օդամաքրութիւն (պատուհանները բանալ, վառարանները վառել):

V. Զ ը ի անվարակ—անվնաս դարձները, քամելը (ֆիտրացիա) և եփ տալը:

VI. Կերակրի անվարակ դարձները.— նիւթերի լուանալը եփ եկած ջրով, բաւական երկար եփ ածել ու լաւ տապակելը:

ԵՐՐՈՐԳ ԲԱԺԻՆ

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Լուողջապահութեան հոգաբարձուներին

1) Տարփութիկ խօլերային, որը կարող է երևալ, առաւել յաջողութեամբ դիմադրուելու համար հիմնվում են առողջապահական խմբեր, բաղկացած իւրաքանչիւրը՝ թաղական առողջապահ բժշկից, պօլիցիայի անդամից և առողջապահ հոգաբարձուներից, որոնք ընտրվում են տեղական հասարակութեան պատիւն և յարգանքը վախելող անձինքներից:

2) Իւրաքանչիւր թաղական հոգաբարձուին յանձնվում է առողջապահական թաղի սահմանում որոշեալ թւով տներ, նշանակած պօլիցիայից կամ տեղական գիւղական իշխանութիւնից (գիւղերում), կամ ըստ ցուցման քաղաքային ինքնավարութեան (ուր որ կայ):

3) Առողջապահ հոգաբարձուն պարտաւորվում է՝

Ա. Մանգալ իրեն խնամքին յանձնուած տները, ոչ պակաս օրէնք մի անգամից, միւսնոյն ժամանակ՝ նա պէտք է խիստ ուշադրութիւն դարձնի մաքրութեան պահպանելուն, բնակարաններում, բազերում, արտաքնոցներում, լուացքի ջրափոսներում, և բակում գտնուող շինութիւններում, և նոյնպէս բժշկի ու պօլիցիական հրամանների կատարելուն և եթէ նկատում է այդ կողմից որ և է անճշտութիւն կամ անհոգութիւն, այդ դէպքում նա առաջարկում է անյապաղ հեռացնել վնասակար արգելքները: Իսկ եթէ բնակիչը չի կատարել հոգաբարձուի պահանջը, այն ժամանակ վերջինս յայտնում է առողջապահ մասնախմբին, նրա իրաւունքից կախուած կարևոր կարգադրութիւններն ստանալու համար:

Բ. Առանց յետաձգելու տեղեկացնում է թաղական բժշկին կամ պօլիցիային իրեն (հոգաբարձուին) յանձնուած թաղի բնակիչների մէջ երևացող ոչ միայն խօլերայի, այլ և ամեն տեսակ հիւանդութեան մասին, որոնք իրենց նշաններով նման են խօլերային, այսինքն սկսվում են փխսանքով և լուծողութեամբ, առաջարկելով միւսնոյն ժամանակ հիւանդին շրջապատող անձանց հեռացնել հիւանդին առողջներից:

Գ. Խիստ հսկողութիւն ունենալ, որ բոլոր արտաթորութիւնք (փխսանք ու կղկղանքը) նոյնպէս և իրերն ու առարկաները, որոնք գտնվում են հիւանդի վրայ կամ նրա շուրջը, մանաւնդ այս արտաթորութեամբ ապականուածները, նոյնպէս և նոյն իսկ բնակարանը, որի մէջ գտնուելիս է եղել այդպիսի հիւանդ, անպատճառ անվարակ դարձնեն հարկաւոր կերպով, ըստ ցուցման առողջապահական բժշկի կամ ուրիշ նշանակուած անձի:

Դ. Հաղորդել իւր գործունէութեան մասին բոլոր տեղեկութիւնները օրէնքով սահմանուած կերպով անգամից, բանաւոր կամ գրաւոր, թաղական բժշկին, կամ թէ, վերջինիս բացակայութեան միջոցին, պօլիցիական աստիճանաւորին:

Ե. Հետեւել որ նորա խնամքին յանձնած բնակիչները ճշտութեամբ կատարեն ինչպէս ընդհանուր պարտաւորեցուցիչ կարգադրութիւնները, որոնք վերաբերում են ժողովրդի առողջութեան պահպանութեան, նոյնպէս և խօլերայի երեւալու դիպուածում հրատարակուած կարգադրութիւնները և հրաւիրել բնակիչներին կատարելու թաղական բժշկի, և ուրիշ նշանակած անձանց բոլոր միւս խրատները բնակարանների սարք և կարգի, հիւանդների բժշկութեան, ժանտախտի տարածման առաջը առնելուն և ուրիշ կանոնների վերաբերութեամբ:

Զ. Օգնել կարողութեան չափ, առողջապահ մասնախմբում գործող անձանց, որոնց վրա պարտք է դրուած ժանտախտը ոչնչացնելու և առանց անհոգութեան հետեւել ճշտութեամբ կատարելու այն անձանց բոլոր առաջարկութիւնները, որոնց նպատակն է ոչնչացնել ժանտախտը և առողջացնել բնակավայրը, իրենց յանձնուած սահմաններում:



Печатано по распоряженію Управленія медицинскою частью гражданскаго вѣдомства на Кавказѣ.

ТИФЛИСЬ. 1890.

Типографія А. А. Михельсона. Головинскій просп., № 12.

